ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
22 հունիս 2026թ.

«ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱԶԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱԶԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կապալառու կամ Ընկերություն) միջև 2024 թվականի օգոստոսի 22-ին կնքված N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/68 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) միակողմանի լուծման ընթացքում արձանագրված հետևյալ փաստական և իրավական հանգամանքները.

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն ստանձնել էր «ՀՀ Սյունիքի մարզի գ. Ծավի կրթահամալիրի» կառուցման աշխատանքների կատարման պարտավորությունը: Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի դեկտեմբերի 10-ը: Հաստատված Օրացուցային գրաֆիկով Ընկերությունը ստանձնել է հստակ պարտավորություններ՝ աշխատանքների առանձին տեսակներն իրականացնել հետևյալ ժամկետներում.

«Հողային» աշխատանքներ (հիմքերի իրականացման համար անհրաժեշտ փուլ)՝ 2025 թվականի նոյեմբերից մինչև 2026 թվականի փետրվար ամիսը,

«Հիմքեր» տեսակի աշխատանքներ՝ 2026 թվականի փետրվարից մինչև հունիս ամիսը, «Նկուղային հարկի ե/բ հիմնակմախք, ներառյալ ծածկի սալը»՝ 2026 թվականի մարտից մինչև հունիս ամիսը,

«Արտաքին էլեկտրամատակարարում»՝ մեկնարկը 2025 թվականի մայիս ամսին:

2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պատվիրատուի և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից իրականացված ընթացիկ վերահսկողության և շինարարական հրապարակ բազմաթիվ փաստացի այցելությունների արդյունքում պաշտոնապես արձանագրվել է, որ Կապալառուն ցուցաբերել է ծայրահեղ անբարեխղճություն և թույլ է տվել պարտավորությունների կոպիտ ու էական խախտումներ, մասնավորապես ՝ Շինհրապարակում առկա են միայն որոշ չափով իրականացված հողային աշխատանքներ, որոնք սահմանված ժամկետում (մինչև 2026թ. փետրվար) չեն ավարտվել: «Հիմքեր», «Նկուղային հարկի ե/բ հիմնակմախք, ներառյալ ծածկի սալը» և «Արտաքին էլեկտրամատակարարում» տեսակի աշխատանքներն առհասարակ մեկնարկած չեն: Պայմանագրի ընդհանուր կատարման վերջնաժամկետից (10.12.2026թ.) տևական ժամանակ առաջ Կապալառուի կողմից փաստացի իրականացված է Պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդամենը 1.14 տոկոսը: «Հիմքեր» և «Նկուղային հարկի ե/բ հիմնակմախք» տեսակի աշխատանքներն իրենց ծավալուն լինելու, ինչպես նաև շինարարական նորմերով (ՍՆիՊ) նախատեսված բետոնի տեխնոլոգիական ամրության ստացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ օբյեկտիվորեն և ինժեներական տեսանկյունից անհնար է ավարտել մինչև 2026 թվականի հունիս ամսվա ավարտը: Աշխատանքների կատարման նման չափազանց ցածր տեմպերը և անգործությունը անժխտելիորեն փաստում են, որ մնացած ողջ ծավալի իրականացումն ու դրանց վերջնական ավարտը մինչև սահմանված վերջնաժամկետը դարձել է ակնհայտ անհնարին:

Հաշվի առնելով վերոգրյալը, Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրի 3.1.4 կետով, 2026 թվականի հունիսի 2-ից միակողմանի լրիվ լուծել է N ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/68 ծածկագրով պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/68	ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/68	ՀՀ Սյունիքի մարզի գ. Ծավի կրթահամալիրի» կառուցման աշխատանքներ	Սկզբնական գումար՝ 1,114,566,204 ՀՀ դրամ Տեղակապված գումար՝ 1,378,744,162	«ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ	03578646	ԻԻՀ, ք,Թեհրան, , Ծահիդ Բեհեշի փ. 310շ, 1-ին հարկ ՀՀ, Կոտայք, Առինջ, Արտաշատ-Սևան խճ., 61 տաղավար	02.06.26	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետեր/ Կապալառուն խախտել է պայմանագրի օրացուցային գրաֆիկը և Կապալառուն աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար	

1. Սույն որոշումը պատշաճ կարգով տրամադրել լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարություն)՝ «ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, և դրա մասին պաշտոնապես ծանուցել Ընկերությանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա է հրապարակման օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ **Ս. ԲԱՂԻՆՅԱՆ**